ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«6» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-44/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի 22.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Երվադա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը գնային առաջարկը ներկայացրել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն, իսկ պատվիրատուն, մերժելով Ընկերության հայտը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 01.04.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.04.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-44/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության հայտով ներկայացված գնային առաջարկում չնչին վրիպակ է եղել, ինչի հիմքով գնահատող հանձնաժողովը չպետք է մերժեր Ընկերության հայտ:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.04.2016թ. թիվ 40-825 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության բողոքն անհիմն է, քանի որ «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշման 44-րդ կետի 4-րդ ենթակետի և 45-րդ կետի պահանջներով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.04.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-44/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով, իրավացիորեն մերժել է Ընկերության հայտը, քանի որ Ընկերության հայտով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել Հրավերի պահանջներին:

3. ԳԲԽ-44/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-44/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-

ՇՀԱՊՁԲ-15/7-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետև նաև՝ Հրավեր) 4.3 կետի գ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ՝ N 4 հավելվածի համաձայն:

3. «Երվադա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածում (գնի առաջարկում) միաժամանակ նշել է երկու տարբեր ընթացակարգերի ծածկագրեր՝ ***«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2»*** և ***«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-1»:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 3 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Երվադա» ՍՊԸ-ի հայտը՝ ներկայացված հավելված 4-ում Ընթացակարգի ծածկագիրը սխալ գրված լինելու պատճառաբանությամբ:

<u>4. ԳԲԽ-44/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի 22.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Երվադա» ՍՊԸ-ի 22.04.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ **գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Երվադա» ՍՊԸ-ն մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2»*** ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, սակայն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածում (գնի առաջարկում) միաժամանակ նշել է երկու տարբեր ընթացակարգերի ծածկագրեր՝ ***«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2»*** և ***«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-1»***, ուստի, գտնում ենք, որ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Երվադա» ՍՊԸ-ի հայտը՝ ներկայացված հավելված 4-ում Ընթացակարգի ծածկագիրը Հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված լինելու հիմքով, պահպանել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն խախտվել Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պահանջները, ուստի Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպիսով, գտնում ենք, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2016թ. թիվ 3 արձանագրությամբ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ Ընկերության կողմից Կենտրոնին 22.04.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-44/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան